ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՅՔԼ ԼԵՄՈՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 13 հունվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնը՝ անձամբ շնորհավորելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Ծննդյան տոնի առիթով և բարի ճանապարհ մաղթելու Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղեմ կատարելիք ուխտագնացությունից առաջ:

Հանդիպման ընթացքում ԱՄՆ դեսպանն անդրադարձավ Հայաստանի ներքաղաքական և տնտեսական իրավիճակին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ տարվող գործընթացներին:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնելով դեսպանին այցելության համար, ընդգծեց երկու երկրների համագործակցության կարևորությունը: Ի դեմս պրն. Լեմոնի, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայաստանում իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնող օտարերկրյա դեսպանների սրտացավ ու բարի մոտեցումը, որ ցուցաբերեցին Հայաստանի համար դժվարին պահին՝ աջակցելով երկրի կայունության պահպանման գործին:

Հայ ժողովրդի իմաստնության հանդեպ ունեցած հավատքով ու համոզվածությամբ, Նորին Սրբությունն իր վստահությունը հայտնեց երկրի հետագա կայունության պահպանման և ղարաբաղյան խնդրի բարեհաջող հանգուցալուծման առնչությամբ: Իր հերթին պրն. Լեմոնը կարևորեց Հայաստանի և հայ ժողովրդի պատմական դերակատարությունը տարածաշրջանում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ